# ՀՐԱՎԵՐ

«ԼՈՒՍԱՎՈՐ ՍԱՀՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ LED ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

| | | |
|---|---|---|
| **Ծրագրի անվանումը** | | Լուսավոր սահման |
| **Շահառու համայնքներ** | | Տավուշի մարզի 2 (երկու) սահմանամերձ համայնքներ |
| **Պայմանագրի տեսակը** | | Ապրանքների մատակարարման պայմանագիր (Հավելված 4) |
| **Հայտարարության տեսակը** | | Մրցույթին մասնակցության հայտերի ներկայացման |
| **Հրապարակման ամսաթիվը** | | 19 ապրիլի, 2019թ. |
| **Հայտերի ներկայացման վերջնաժամկետը** | | 25 ապրիլի, 2019թ., ժամը 17: 00 |
| **Հայտերի բացումը** | | 25 ապրիլի, 2019թ., ժամը 17: 30 |
| **Հայտերի ներկայացման հասցեն** | | info@energyagency.am, կամ<br>0021, ՀՀ, ք. Երևան, Աղոնցի փ. 10<br>«Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ[1] |
| **Հայտերի ներկայացման լեզուն** | | Հայերեն |
| **Առաքման ժամկետը** | | Պայմանագրի ստորագրումից հետո 5 օրվա ընթացքում |
| **Քանակը** | | 5,500 հատ |
| **Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել** | | |

## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Լուսավոր սահման» ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի նոյեմբերին՝ որպես կամավորական-հասարակական նախաձեռնություն: Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը էլեկտրաարդյունավետ տեխնոլոգիաների օգտագործման միջոցով տնտեսումների իրականացման վերաբերյալ: «Լուսավոր սահման» ծրագիրն իրականացվում է Հայկական բարեգործական ընդհանուր միության և «Եվրասիական համագործակցություն» հիմնադրամի ՔՀ Կամուրջ ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Որպես ծրագրի շահառուներ ընտրված են ՀՀ սահմանամերձ համայնքները, որոնց ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 30-Ն որոշմամբ:

«Լուսավոր սահման» ծրագրի իրականացման շնորհիվ 27 սահմանամերձ գյուղերի շուրջ 5,000 ընտանիքների արդեն իսկ տրամադրվել են ավելի քան 25,000 միավոր էներգախնայող լուսատուներ, որի շնորհիվ այդ համայնքներում միջին տարեկան էներգախնայողությունը կազմում է ավելի քան 3.750 մլն կՎտժ (150 մլն ՀՀ դրամ):

[1] *Փոստային առաքմամբ ներկայացված հայտերի ստացման ամսաթիվ է համարվում հայտի Հիմնադրամ մուտքագրվելու օրը*

**ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**
**Հիմնական պահանջներ՝**

| Light Emitting Diode (LED) luminaire | Լույս արձակող դիոդային (ԼԱԴ) լուսատու |
|---|---|
| Form – traditional light bulb shape (water droplet shape) | Արտաքին տեսքը – ավանդական շիկացման լամպի տեսք (կաթիլ)A60,A65 |
| Screw Base: E27 | Կոթառ - E27 |
| Rated Input Voltage – 170-240V; | Աշխատանքային լարում - 170-240Վ; |
| Rated Input Frequency – 50Hz; | Աշխատանքային հաճախություն -50Հց |
| Power factor not less than – 0.5; | Հզորության գործակից, ոչ պակաս քան - 0.5; |
| Light output not less than – 1200lm; | Լուսային ելք, ոչ պակաս քան 1200լմ; |
| Luminous Efficacy min – 90 lm/W; | Լուսարգասիք նվազագույնը -90 Լմ/Վտ; |
| Light Correlated Color Temperature (CCT) – 2500-3200 K; | Լույսի համահարաբերակցված գունային ջերմաստիճան (ՀԳՋ)-2500-3200 Կ; |
| Color Rendering Index (CRI) not less than – 75(Ra); | Գունափոխանցման գործակից (ԳՓԳ), ոչ պակաս քան -75 (Ra); |
| Fluctuation rate maximum permissible – 5% | Տատանման ցուցիչ, առավել ագույնը - 5% |
| Operating ambient temperature - -25 -:- +50 C | Աշխատանքային ջերմաստիճանի տիրույթ՝ -25 -:- +50 C |
| Operating lifetime, at least --30000 hours | Շահագործման ժամկետը, առնվազն՝ 30000 ժամ |
| Energy Efficiency Class, not less than – A; | Էներգաարդյունավետության դաս, ոչ պակասքան - A |
| Warrantee period, at least – 3 years. | Երաշխիքային ժամկետ ոչ պակաս քան 3 տարի: |
| Power of LED 12-14 W: | Լամպի հզորություն 12-14 Վտ: |
| Existing guarantee certificate | Երաշխիքային կտրոնի առկայություն |

**Հավելյալ պահանջներ՝**

1. Առաջարկվող կետերի տեխնիկական պարամետրերի համապատասխանությունը վերը նշված պահանջներին հաստատվում է փաթեթում ներառված պիտակավորված, ուղեկցող փաստաթղթերով կամ կատալոգի պատճեններով,
2. Լուսատուները պետք է ունենան հստակ նշումներ մոդելի և դրա տեխնիկական նկարագրի մասին, ինչպես նաև ծագման երկրի վերաբերյալ:

**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ**[2]

[2] *«Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամը պատասխանատվություն չի կրում մասնակիցների կողմից հայտի պատրաստման գործընթացում իրականացված ծախսերի համար, դրանք չեն փոխհատուցվում Հիմնադրամի կողմից:*

Հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը պետք է ներկիայացնի պատշաճ կերպով կազմված և հաստատված հայտ[3]: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում:
Փոստային առաքմամբ ներկայացված հայտերի ստացման ամսաթիվ է համարվում հայտի Հիմնադրամ մուտքագրվելու օրը:
Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, որի ձևը ներկայացված է Հավելված N 1-ում,
2. Իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն Հավելված N 2-ի, ինչպես նաև ներկայացված նկարագիրը հավաստող փաստաթղթերը,
3. Գնային առաջարկ՝ համաձայն Հավելված N 3-ի,
4. Տեղեկատվություն «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին բավարարելու վերաբերյալ,
5. Հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված տարբերակը,
6. «EAC» (Եվրասիական տնտեսական միություն) և / կամ CE (եվրոպական) որակի վկայականի կամ ապրանքի որակը հավաստող այլ վկայականի պատճենը:
7. Տեղեկատվություն ապրանքի երաշխիքային սպասարկման վերաբերյալ,
8. Ապրանքի 1 նմուշ, բնօրինակ՝ լաբորատոր հետազոտություն իրականացնելու նպատակով[4],
9. Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

## ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Մասնակցի կողմից առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի պետք է ներառի փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:
Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, Հավելված N 3-ով սահմանված ձևին համապատասխան: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

---

[3] *Մասնակիցը, մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետվերցնել իր հայտը:*
[4] *Անկախ մրցույթի արդյունքներից, նմուշը ենթակա չէ վերադարձման:*

1. մասնագիտական փորձառություն,
2. ֆինանսական միջոցներ,

**«Մասնագիտական փորձառություն»:** Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվան դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկի **հիսուն** տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի մասնակցի ներկայացրած գնային առաջարկի **քսան** տոկոսից:
**«Ֆինանսական միջոցներ»:** Մասնակիցը հայտով ներկայացնում է կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին տեղեկատվություն, մասնավորապես՝

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝
   - երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից,
   - հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը:

## ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Հայտերի գնահատումն իրականացվում է Հիմնադրամի կողմից ներկայացված նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքների ստացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը կամ այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան ենթակա է մերժման:
Մասնակիցների գնահատումն իրականացվում է հետևյալ համամասնություններով՝

| | | |
|---|---|---|
| 1. | Առաջարկվող ապրանքի որակական համապատասխանությունը տեխնիկական նկարագրին, սերտիֆիկատների առկայություն, նկարագիրը հավաստող փաստաթղթերի առկայություն | 40% |
| 2. | Լաբորատոր փորձաքննության արդյունքներ | |
| 3. | Գնային առաջարկ | 30% |
| 4. | «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշ | 10% |
| 5. | «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ | 10% |
| 6. | Ապրանքի երաշխիքային սպասարկում | 10% |

Այն մասնակիցները, որոնք գնահատման արդյունքում կհավաքեն 70%-ից ավելի, Հիմնադրամի կողմից կհրավիրվեն միաժամանակյա բանակցությունների:
Հաղթող մասնակիցը որոշվում է բանակցությունների արդյունքում:
Եթե հայտերի բացման ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա տվյալ մասնակիցը տեղեկացվում է այդ մասին՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու նպատակով: Եթե սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկում արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը մերժվում է:

**ՀԱՎԵԼՎԱԾ N 1**

**ԴԻՄՈՒՄ**
**«ԼՈՒՍԱՎՈՐ ՍԱՀՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ LED ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**

[*Կազմակերպության/ ֆիզիկական անձի անվանումը/ անունը*] հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթին և իրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

[*Կազմակերպության/ ֆիզիկական անձի անվանումը/ անունը*] հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է [*երկրի անվանումը*] ռեզիդենտ:

[*Կազմակերպության/ ֆիզիկական անձի անվանումը/ անունը*] հարկ վճարողի հաշվառման համարն է՝ [*հարկ վճարողի հաշվառման համարը*]:

[*Կազմակերպության/ ֆիզիկական անձի անվանումը/ անունը*] էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [*էլեկտրոնային փոստի հասցեն*]:

| | |
|---|---|
| Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը | (ստորագրություն)<br>Կ.Տ[5]. |

[5] *Առկայության դեպքում*

**ՀԱՎԵԼՎԱԾ N 2**

# ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
# «ԼՈՒՍԱՎՈՐ ՍԱՀՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ LED ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ

[*Կազմակերպության/ ֆիզիկական անձի անվանումը/ անունը*]՝ որպես «Լուսավոր սահման» ծրագրի շրջանակներում LED լուսատուների ձեռքբերման մրցույթի մասնակից ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

| **Առաջարկվող ապրանքի** | | | | |
|---|---|---|---|---|
| **անվանումը** | **ապրանքային նշանը** | **արտադրողի անվանումը** | **ծագման երկիրը** | **տեխնիկական բնութագրերը** |
| LED լուսատու | | | | |

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը

(ստորագրություն)
Կ.Տ[6].

[6] *Առկայության դեպքում*

**ՀԱՎԵԼՎԱԾ N 3**

**ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ[7]**
**«ԼՈՒՍԱՎՈՐ ՍԱՀՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ LED ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ**

[*Կազմակերպության/ ֆիզիկական անձի անվանումը/ անունը*] առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

| ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՐԺԵՔԸ (տառերով և թվերով) | ԱԱՀ[8] (տառերով և թվերով) | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՆԸ (տառերով և թվերով) |
|---|---|---|---|
| **1** | 2 | 3 | 4=2+3 |
| | | | |

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը

(ստորագրություն)
Կ.Տ[9].

[7] *Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:*

[8] *եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 3-րդ սյունակում:*

[9] *Առկայության դեպքում*

**ՀԱՎԵԼՎԱԾ N 4**

# LED ԼԱՄՊԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան [*օր*] [*ամիս*], 2019թ.

Հիմք ընդունելով «Հայկական քաղաքացիական հասարակության կազմակերպություններ 2.0» ծրագրի շրջանակներում «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» հիմնադրամի և «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի միջև 2018 թվականի նոյեմբերի 30-ին կնքված թիվ AGBU/F-206/18 ենթադրամաշնորհի պայմանագիրը և «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» հիմնադրամի և «Եվրասիական համագործակցության» հիմնադրամի ՔՀ Կամուրջ ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Լուսավոր սահման» Ծրագիրը «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (գրանց. համարը՝ 222.160.1024513, գրանց. ամսաթիվը՝ 25.06.2018թ.), ի դեմս գլխավոր տնօրեն Տիգրան Հարությունյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և [*Կազմակերպության անվանումը*]-ը, ի դեմս տնօրեն [*անունը, ազգանունը*]-ի, ով գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Վաճառող») մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է Գնորդին ի սեփականություն հանձնել սույն պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում (այսուհետ՝ «Հավելված») նշված ապրանքները (այսուհետ՝ «Ապրանք»), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Պայմանագրի պայմաններին համապատասխանող որակյալ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքների հանձնումը հաստատվում է Կողմերի միջև կնքվող հանձնման-ընդունման ակտով, որի երկկողմանի ստորագրման պահից Ապրանքի նկատմամբ ծագում է Գնորդի սեփականության իրավունքը:

1.3 Վաճառողը հաստատում և հավաստում է, որ.

1.3.1 ունի բոլոր իրավունքները, հավաստագրերն ու թույլտվությունները Պայմանագիրը կնքելու համար,

1.3.2 Ապրանքը ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով կամ այլ սահմանափակումներով, և այն վեճի առարկա չէ,

1.3.3 Պայմանագրի կնքումը չի խախտում երրորդ անձանց շահերը և Վաճառողը պարտավորվում է Գնորդին զերծ պահել Պայմանագրի հետ կապված ցանկացած պահանջից և հայցից:

1.3.4 Վաճառողը պարտավորվում է Գնորդին հատուցել Պայմանագրի 1.3 կետում նշված հավաստումների ոչ իրական լինելու հետևանքով Գնորդի կրած իրական վնասները, ինչպես նաև Գնորդի կողմից կատարված/կատարվելիք ծախսերն ամբողջությամբ:

1.4 Վաճառողը պարտավորվում է Գնորդին հատուցել Պայմանագրի 1.3 կետում նշված հավաստումների ոչ իրական լինելու հետևանքով Գնորդի կրած իրական վնասները, ինչպես նաև Գնորդի կողմից կատարված/կատարվելիք ծախսերն ամբողջությամբ:

## II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Վաճառողն իրավունք ունի՝**

2.1.1 պահանջել Գնորդից Պայմանագրի պայմաններին համապատասխանող որակյալ Ապրանքի համար վճարել Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

2.1.2 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.2 Վաճառողը պարտավոր է՝**

2.2.1 Սույն Պայմանագրի կնքման օրվանից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում հանձնման-ընդունման ակտով և հաշիվ ապրանքագրով ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փ. 10, «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ հասցեում գտնվող Գնորդի գրասենյակի տարածքում կամ նախապես Գնորդի հետ համաձայնեցված այլ հասցեում Գնորդին հանձնել Հավելվածով նախատեսված քանակին և տեսականուն համապատասխանող Ապրանքը՝ պատշաճ փաթեթավորված վիճակում, առանց թերությունների, չօգտագործված, երրորդ անձանց իրավունքներից ազատ և որևէ այլ կերպ չծանրաբեռնված վիճակում:

2.2.2 մինչև Պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Ապրանքն առգրավելու դեպքում հատուցել Գնորդի իրական վնասները:

2.2.3 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.2.4 Գնորդի կողմից ապրանքից հրաժարվելու դեպքում՝ հետ տանել պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Գնորդի կողմից ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.2.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.2.6 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.2.7 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**2.3 Գնորդն իրավունք ունի՝**

2.3.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են [*օրերի քանակը*] օրից ավելի:

2.3.2 եթե Վաճառողը չի հանձնել Պայմանագրի 1.1. կետում նշված Ապրանքը կամ հանձնել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, պահանջել 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում հանձնել Ապրանքը կամ լրացնել Ապրանքի (ներառյալ պատկանելիքների) պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված Ապրանքի համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

2.3.3

2.3.4 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.3.5 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.3.6 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.3.7 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.3.8 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.3.9 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են [*օրերի քանակը*] օրից ավելի,

2.3.10 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.4 Գնորդը պարտավոր է`**

2.4.1 Ապրանքի համար վճարել Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված չափով, ժամկետներում և կարգով, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4.2 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և Վաճառողին վերադարձնել հանձնման-ընդունման Ակտը և նույն օրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել ապրանքների մատակարարման հարկային հաշիվը:

2.4.3 Պայմանագրի 2.4.2 կետում նշված հանձնման-ընդունման Ակտը չստորագրելու դեպքում 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնել չընդունման վերաբերյալ գրավոր հիմնավորում:

2.4.4 2 Գնորդը Պայմանագրի 2.4.2 կետում նշված ժամկետում հանձնման-ընդունման Ակտը չստորագրելու, բայց նաև չընդունման վերաբերյալ գրավոր հիմնավորում ժամանակին չներկայացնելու կամ ներկայացված գրավոր հիմնավորմամբ ստորագրումից ձեռնպահ մնալու մասին անհրաժեշտ և բավարար հիմքեր չներկայացնելու դեպքում, հանձնման-ընդունման Ակտը համարվում է ստորագրված և Ապրանքն ընդունված:

## III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է [*պայմանագրի գինը թվերով և բառերով*] ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.2 Պայմանագրի գնից` մինչև [*կանխավճարի չափը*] ՀՀ դրամը, Պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, Գնորդը փոխանցում է Վաճառողի Պայմանագրում ամրագրված բանկային հաշվին` որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

3.3 Պայմանագրի գնի մնացած մասը վճարվում է ապրանքը ստանալուց և հանձնման-ընդունման Ակտի և էլեկտրոնային հաշվի երկկողմանի ստորագրման օրվանից հետո` 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

3.4 Ապրանքների գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

3.5 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի Պայմանագրում ամրագրված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

## IV. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը տեխնիկական բնութագրով սահմանված, ինչպես նաև նշված ապրանքի համար սահմանված ստանդարտի պահանջներին:

4.2 Ապրանքի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1096 (մեկ հազար իննսունվեց) օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում փոխարինել նույն տեսակի նոր Ապրանքով:

## V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

5.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է

տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## VI. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել:

6.2 Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում, Կողմը, որի պարտավորությունների պատշաճ կատարմանը խոչընդոտում է անհաղթահարելի ուժը, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին, որն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 3 (երեք) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին, եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի:

## VII. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և պատշաճ կատարումը:

7.2 Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.3 Պայմանագրի բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:

7.4 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5 Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ | |
| Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աղնոցի 10 | Հասցե՝ |
| ՀՎՀՀ՝ | ՀՎՀՀ |
| Բանկ՝ | Բանկ՝ |
| հհ՝ | հհ՝ |
| Գլխավոր տնօրեն՝ Տիգրան Հարությունյան | [*Գործադիր մարմնի ղեկավար*] |
| ______________________ | ______________________ |

Ստորագրություն
Կ.Տ.

Ստորագրություն
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Կողմերի միջև [օր] [ամիս], 2019թ… կնքված
LED լամպերի մատակարարման պայմանագրի

| Անվանում | Տեխնիկական բնութագրեր | Քանակ |
|---|---|---|
| LED լուսատու | ***Light Emitting Diode (LED) luminaire*** | 5500 |
| | *Form – traditional light bulb shape (water droplet shape)* | |
| | *Screw Base: E27* | |
| | *Rated Input Voltage – 170-240V;* | |
| | *Rated Input Frequency – 50Hz;* | |
| | *Power factor not less than – 0.5;* | |
| | *Light output not less than – 1200lm;* | |
| | *Luminous Efficacy min – 90 lm/W;* | |
| | *Light Correlated Color Temperature (CCT) – 2500-3200 K;* | |
| | *Color Rendering Index (CRI) not less than – 75(Ra);* | |
| | *Fluctuation rate maximum permissible – 5%* | |
| | *Operating ambient temperature - -25 -:- +50 C* | |
| | *Operating lifetime, at least --30000 hours* | |
| | *Energy Efficiency Class, not less than – A;* | |
| | *Warrantee period, at least – 3 years.* | |
| | *Power of LED 12-14 W:* | |
| | *Existing guarantee certificate* | |